

Հ ԱՅՄՅՆՆԵՐ  
ՓԻԼՍՈՓԱՅԻՆ

ՈՂԲԵՐԸ

(Ա)





ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ


ՈՒՌԵՆԻ Յ. ՔԻՐԿՃԵԱՆ

Կ-Պոլիս Ֆինանսըրյար

— 1859 —








ԵՈՒՆԿ  
ՓԻԼՍՈՓԱՅԻՆ  
ՈՂԲԵՐԸ

1218





# ԵՈՒՆԿ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԻՆ

ՈՂԵԵԲԸ

ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՍ

ԳԻՇԿԻՆԱԿՐՈՒ ԲԱԺԱՌԻԱԾ

463

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ


ՅԱՆԳՂՒՇԿԱՆ ԻՆՏԳՐԻՆ  
ԱՐՄԵՆԱԿ Ն. ՉԻՋՄԷՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՐԵՆԻ Յ. ՔԻՒՐՔԵԾԵԱՆ

Կ.-Պոլիս Ֆինանսըլար

1859



1844

THE

...

...

...

...

...

...

...

...

...





## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Երկար ժամանակէ հետէ մասնաւոր անձանց կողմանէ ստէպ ստէպ կը յորդորուէինք, հայերէն աշխարհաբար լեզուաւթարդմանելու և հրատարակելու, Եունկին ողբերը, որոնք արդէն Տաճկերէն լեզուաւ տպուած են 'ի Ալէնետիկ: Իսկ մենք որքան որ կը ճանչնայինք, այսպիսի չնաշխարհիկ հեղինակութեան մը օգուտը մեր Ազգին, տակաւին կը վախճայինք որ չըլլայ թէ մեր տկար գրիչովը նիւթին ազնուութիւնը կորսնցնենք. շատ խորհեցանք, շատ տնտնայինք, բայց վերջապէս տեսնելով որ զմեզ յորդորողները շատցան, մենք ալ հասարակութեան ներողամտութեանը վստահանալով ձեռնամուխ եղանք անոնց փափաքը լեցնելու, օգնական ընելով մեզ այս գործիս Տաճկերէն թարգմանութիւնը, և չէ թէ միայն օգնական այլ առաջնորդ նաև ամեն կերպով:

Երուարդ Եունկ Անգղիոյ եկեղեցւոյ պաշտօնեաներէն հռչակաւոր Փիլիսոփան ծնաւ 1684ին, Երիտասարդութեան ժամանակ հարկ եղած գիտութիւնները ուսանելէն վերջը, անցեալ դարուս սկիզբները, իր մէկ քանի հազուագիւտ հեղինակութիւններովը սկսեց իւր անունը հռչակելու: Եունկ բնականաբար մերամաղձօտ ըլլալէն 'ի զատ' բաղդն նաև իրեն չօգնեց, և թէև պատանեկութեանը աշխարհասէր է եղեր՝ տակաւին բաղդը զինքը այնպիսի կացութիւններու տակ է

Ճմլեր որ աշխարհէս քարշելով դեռ չի մտած ինքզինքը գե-  
րեղմանն է խօթեր: Երբտասարդութեան ժամանակ իւր հե-  
տամուտ եղած գործերուն մէկուն մէջ չի յաջողելէն 'ի դատ,  
տարիքը առնելէն վերջը նաևս իւր տասը տարուան միմիայն  
մխիթարութիւնը եղող Լուսիա կինը և նորին երկու զաւ-  
կրները, Յիւանտրոսն և Ներկիզէն երեք ամուսան մէջ այս  
աշխարհէս ելեր են, ասոր համար սրտին տագնապէն Աշ-  
խարհէս բոլորովն քաշուելով, իրեն բնական եղած բանաս-  
տեղծական գիտութեանը ինքզինքը բոլորովն նուիրելով իւր  
վիշտերը կը փարատէր. և մնացեալ բոլոր կեանքին մէջ գը-  
րիչը ձեռքէ չի ձգելով թէ ոտանաւոր և թէ արձակ հեղի-  
նակութիւններ շարագրած է. բայց վերջապէս իւր այն ցան-  
կալի մահը 1765 իրեն մօտենալուն, չգիտցուիր ինչ պատ-  
ճառաւ՝ իւր բոլոր հեղինակութիւնները հրոյ ճարակ է բը-  
րեր որոնցմէ ազատ մնացածները խիստ սքանչելի գործքեք  
են, և ամենէն ընտիրները իւր Գիշերներն կամ ողբերն են,  
որոնց հրատարակմանը ձեռնամուխ եղած Էմբր Ասոնք յա-  
ւիտենական կենաց և հողւոյ անմահութեան վրայ սքանչելի  
ապացոյցներով կը խօսին, իւր խրատները և յանդիմանու-  
թիւնները զուարճալի օրինակներով կանցնին:

ԵՄԻՆՆԵՆ

ՓԻԷԹԱՌՓԱՅԻՆ

ՈՂԲԵՐԸ

ԿԱՄ

ԳԻՇԵՐՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ

Ան քաղցրիկ բուն հոգնած բնութեան հանգըստութիւն կը պարգեւես . . . բայց աւնդ որ կը փախչիս: Ան ալ աշխարհասերներու նման վշտահարներէ կը հեռանայ. բարեբաղդութեան տեղերէն հեռու չի մնար. հեծկյտանաց ձայներէն կը փախչի, բռնունի պես կը լքուի, եւ քարելու համար արտասուաց դեռ ենթակայ չեղող աչքեր կը փնտրուի: Շատոնց հետէ հանգիստ քնոյ չեմ արժանացած, քանի մը վայրկեան անզգայութեան մեջ քաղուելու վերջը կարբնամ . . . Էրանի անոնց որ մէյմ'ալ չեն արբննար: Բայց ան ալ ունայն էրէ



Երազներուն գերեզմաններուն մէջ մտնելը ճշմարիտ է. 'ի գուր է անոնց ալ երանութիւն կարդալը: Քունիս մէջ ի՞նչ տարօրինակ երազներ կը տեսնեմ. մեկ բշուառութենէ միւսին գլտորելով, երեսակայեալ վշտաց կը մատնուիմ, վերջապէս կ'ըստափիմ ինքզինքս կը գտնեմ. կարբնեամ. կարբնեամ այն. բայց ի՞նչ կը շահիմ. եղուկ ինն, բշուառութիւններս կը փոխեմ. եւ երազածներես աւելի ճշմարիտ բշուառութիւններ կը գտնեմ. նն բշուառութիւններս ողբալու համար կեանքս խիստ կարճ է: Գիշերք որջափ ալ խաւար ըլլան, տակաւին իմ վշտերուս չափ սոսկալի, եւ զգացմանցս չափ տըխուր էւ սգալից ջեն կրնար ըլլալ . . . :

Ահա գիշերը իւր շրջանին կեսը լմնցուց, օդին մէջ տեղը. տպագլխօնեալ գանի մը վրայ նստած՝ անարկու բագաւորի մը նման մքութիւնը, վանդակի մը ետեւէն, իւր կապարեալ գաւազանը ննջող տիեզերքին վրայ ուղղած է: Ան աս ի՞նչ լութիւն է. ի՞նչ մքութիւն. աջքեր ջեն տեսներ, ականջներ ջեն լսեր, ընդհանուր երկիրը կը ննջէ. աշխարհ մեռած կեցած է: Աշխարհս ապրեցնող գօրութիւնը կեցած, բնութիւնը կարծես հանգիստ կառնէ. նայ անուելի հանգստութիւն. աշխարհիս վախճանը յայտնող տեսարան: Գայ բող գայ ուրեմն աշխարհիս վերջը, ո՞ր կարողութիւն, պատառ: Եւ արդ վարագոյրդ,

ինչո՞ւ որ համբերելո՞ւ այ գօրութիւնս ջի՛մնաց:

Ո՛ր լուսօրիւն. ո՞ւ մրութիւն. պատուական ընկեր-  
ներ, շեական գիշերին հարազատ զակերները. ա-  
նուշ խորհրդածութեանց աղբիւրներ, դուք որ զըտ-  
նուած տեղերնիդ լքեալ մարդս վերցընելով անոր  
մտքի գօրութիւն կընծայէք, ինձ այ օգնութեան հա-  
սէք, ձեր իշխանութիւնը անա. քիչ ատենէն այս  
մահկանացու մարմնոյս աճիւնը յետ իշխանութեա-  
նը պիտի հպատառէի: Բայց ես ձեր անօգուտ օգ-  
նականութիւնը խնդրելով ի՞նչ կը շահիմ: Ո՞վ էք  
դուք . . . յախտենական ոչնչին ճայն տուող առա-  
ւօտեան աստղերը ստեղծելով երկնից կամարին  
վրայ շարող, եւ նոր ստեղծուած Աշխարհին իւր  
Արարիչը յայտնելու համար. աստղերուն սրանչե-  
լի շրջանը սկսեցնող կարող Արարչին քով ի՞նչ  
էք դուք . . . : «Բեզի՛» ո՞ւ կարող Աստուած քեզի կա-  
ղաչեմ, սա երկնից երեսին վրայ փայլող Արփուոյն  
յոյս տուողը դու ես. դպիր հոգւոյս, եւ իմ մտքիս  
այ յոյս շնորհէ: Այս այն ժամն է որ մտքիկ քու-  
նի մեջ քաղուած ժամանակ, ազանն իւր ստաց-  
ուածքին քով կըսպասէ. իմ այ ստացուածքս դու  
ես, իմ այ աջուրցներս քու վրադ են. ապաւինելու  
տեղ մը քեզմէ կը յուսամ: Հոգիս այ զգայարանա-  
ցըս նման խաւարի մեջ է. շնորհք քե՛հ՝ Տէր իմ,  
եւ զիս պատող կրկնակի մրութեան մեջէն՝ հոգ-



ւոյս լուսոյ կայծ մը խրկէ. խաւարապատ հոգիիս  
լոյս շնորհէ, եւ մխիթարէ: Ես ցաւերս մոռնալու,  
վշտերս չի յիշելով կենաց եւ մահուան տեսարան-  
ները նկատելով, օգուտ քաղելու միտք ունիմ. դու  
եղիր ինձ առաջնորդ. ամեն ճշմարտութիւն յայտ-  
նէ ինձ, լեզուս ու գործքերս կառավարէ. մտքիս  
զօրութիւն տուր, ճանչնամ բարին. իշխէ կամբիս՝  
աղկոյթիւնը սիրեմ, զիս գերի ըրէ տռաքինու-  
թեան, որ մինչեւ ցարդ ունեցած պարտականու-  
թիւններս, ասկից վերջ վճարելու կարենամ. եւ վը-  
րիժուցդ գաւաթը, այս խեղճ գլխուս վրայ հատ-  
նելով, 'ի գուր քափած չըլլայ:

Ահա՛ ժամացոյցը մեկը կը զարնէ. հե՛, հե՛. մենք  
ժամերը կորսնցընելնուս վերջը կը համբենք: Անանկ  
է նէ ժամանակին ձայն հանելը, մարդկային իմաս-  
տութիւն մըն է: Մետաղին ձայնը հոգւոյս կը հնչէ,  
դատաստանին հրեշտակին ձայնին նման հոգիս կը  
դողացնէ . . . ժամացոյցը իրօք զարկա՛ւ մի. այս  
զարնուածքը կենացս վերջին ժամն է, բայց աս-  
կից առաջ զարնողները ի՞նչ եղան . . . գացին եւ  
աշխարհիս ծնունդը տեսնող տարիներուն հետ  
միացան: Աս մեկ նշան մըն է որ ինձ կեանքես  
զատուիլս կիմացնէ. ո՞՞րքան պարտականութիւն  
ունիմ դեռ. կատարելիք: Վախերս, յոյսերս մե-  
կըզմեկու. էն խառնուած, բոյոր անձս վախի մեջ

է. ո՞ր կերքամ էս . . . սա կարճ կենաց եզրէն վար նայելով՝ կը դողամ: Ով Աստուած. սա ի՞նչ անյատակ վիրապ է, ճ գարնուրելի յաւիտենականութիւն, դու. էս որ աչքիս կերեւնաս. տարակոյս ջուներիմ . . . ինձ նման եղկելի մը որ մէկ ժամու մը անգամ տեր ջը կրնար ըլլալ: հապա յաւիտենականութեան ի՞նչպէս տեր պիտի ըլլայ:

Մարդս խիստ զարմանալի է, երէ անհասկընալի էակ մը կայ նէ, ան ալ Աստուծմէ ետքը մարդս է. մարդս աղէկ մը ճանչնալու համար, մէկգմէկու հակառակ երեցող, հագար տեսակը տեղ մը բերելով անանկ նկատելու է: Իրարու հակառակ՝ ի՞նչ հարստութիւն. ի՞նչ աղքատութիւն. ի՞նչ նշանատութիւն. ի՞նչ մեծութիւն. մարդս ի՞նչ նուաստ է. ի՞նչ մեծ է. հապա այս զարմանալի էակը ըստեղծող Աստուած, ի՞նչ տեսակ բան մըն է: Մարդուս վրայ երկու հակառակ բնութիւն միատեղ կը գտնուի. մարդս մէկգմէկու հակառակ երկու յաւիտենականութեան ծագաց տեղն է. անոնց երկու ծայրը միատեղ բերող կապն է, Արարիչ Աստուծմէ մինչեւ ոչնչութիւնը անբիւ արարածոց շղթային մէջ տեղը մէկ փայլուն օղակ մըն է. Արարչին լոյսին խաւարած ճառագայթը, անգծագլխի անձին պարզ պատկերը, է. անկատար կերպարանքն է. անցաւոր հողին գաւակը, յաւիտենական երա-



նութեան ժառանգը, անմահ է. յախտենական որդ  
մը, մեկ ճճի մը, մեկ Աստուած մըն է: Ինքզինքես  
էս ինքս վախնալով՝ անձիս մեջ ինքզինքս կը կոր-  
սընցընեմ: Միտքս իւր գտնուած տեղը օտարական,  
բոլոր անձիս մեջ կը շրջի, կը գարմանամ, է. կը  
վախնամ: Հոգիս ինքզինքը կը փնտըռեմ. է. ինքը-  
զինքը գտնելու համար՝ ինքզինքին կը դառնայ,  
աջուրները կը տնկեմ, ինքզինքին կը նայի, կը շուա-  
րի, ինքը ինքզինքը չի կրնար ճանչնալ, կսկըսի  
վախնայ: Մարդս ինքզինքին ի՛նչ գարմանալի գաղտ-  
նիք մըն է, սա իւր ողորմելի վիճակին մեջ կը նա-  
յի՞ս մի իւր անսահմանութեանը, սա կրած վշտե-  
րուն մեջ ցըցուցած յաղթող կերպարանքը կը նկա-  
տե՞ս մի: Միտքս վախի ուրախութեան մեջ շուա-  
րած կեցած անձիս ի՞նչ ըլլալը չի կրնար հասկը-  
նալ: Երբեմն կը գարմանամ ուրախութենէս կը թըռ-  
չիմ, երբեմն վախես ինքզինքս կորսնցնելով, ինք-  
զինքես կը դողամ . . . ո՞վ կրնայ սա կեանքս պա-  
հել . . . նաեւ այս անձս ո՞վ կրնայ ոջնջացընել:  
Հրեշտակ մը զիս գերեզման մտնելէն չի կրնար  
ազատել. բայց տակաւին հրեշտակաց ամեն խում-  
բը չի կրնար զիս գերեզմանին մեջ բանտարկել:  
Քաւ լիցի ունայն կարծիք մը չէ հոգւոյս անմա-  
հութիւնը. բնութեան ամեն բանէն փաստ ունիմ:

Մարդոս բարեխառութիւնը հոգացող Արարիչը

Երկնից կամարին վրայ լոյս տալու համար տեղ տեղ աստղեր շարեր է. աս մասին քունն անգամ մարդս կրթելու պաշտօնն ունի. անուշ քունը բըմբած գգայարանքս իր իշխանութեանը տակ առած ժամանակ, արքուն հոգիս հոգնել չի գիտեր. անդամներս երբ անշարժ են, հոգիս տակաւին իւր ընքացքէն էտ ջը մնար, երբեմն կանանջ է. ծաղկագարդ հավիտները կը պտըտի. երբեմն անկոխ անտառի մը մէջ տրտում տխուր կը շրջի, է. ճամբայ չի գտներ, երբեմն բարձր գագարէ մը կը բռնջի. ձորէ ձոր կը գլստրի է. կը վախնայ, մէյ մըն ալ ինքզինքը լճի մը մէջ կը գտնէ, ջրին երեսը լողալու կսկըսի. կատղած ալեաց հետ կը մաքառի. է. վերջապէս եզր մը կը հասնի. լեռնէ վեր մազլցելու կսկըսի. շատ անգամ կը կարծէ թէ օդին մէջ կը բռնջի. է. իւր ջորս կողմը խառնիխուռն տեսարաններ կը տեսնէ: Բայց կուգէ իւր տեսած երազէն հաճութիւն գգայ, կուգէ տեսած տեսարաններէն վախնայ, տակաւին իւր անձը՝ սա ոտքիս տակի հողէն նախապատիւ ըլլալը, ատ սուտ վախերը է. սուտ ուրախութիւնները իրեն իմաց կուտան: Աշխատութեանը սահման չի կայ. աչքը միշտ վերերը էլլելու վրայ է. միշտ դեպ իւր բնակարանը բարձրանալու կը նայի. է. իւր ծանրութեամբը գիները հողին հետ միացընող մարմնոյն մէջ կը բռն-



ջըտի կը մնայ: Գիշերուան լուսինն անգամ հոգ-  
ւոյն անմահութիւնը կը յայտնէ. խառարը յաւիտե-  
նական օրուան անտաբերն է. անդամներս քմրե-  
ցընող քունը միտքս կը կրքէ, եւ այս պարապ է-  
րագներուն ամեն կողմն շրջելը պարապ չէ: Գի-  
շերուան երագները կրնան մեզի շատ օգտակար  
դասեր տայ: Մարդուն արգելք եղողը իւր կար-  
գադրած երեսակայութիւններն են: Արդէօք բանի՞  
բանի անգամ քունին անկանոն երագներէն այ ա-  
ւելի անկարգ երեսակայութիւններ կարգադրած էմ:  
Մեկզմեկու անհամաձայն բաները միտտեղ բերե-  
լով, ջըլլայու բռնին եռօրին տայու աշխատած  
էմ: Այ տխմար անջ. սա Աշխարհիս անհաստատ  
վիճակին մէջ, հաստատուն գուարճութիւններ կը  
յուսայի կենացս ալեկոծութեանց մէջ հանդարտ օ-  
րեր կըսպասէի:

Աշխարհիս խառնաշփոթութեանց մէջ, հանգիստ  
կեանք կը փնտռէի. երիտասարդութեանս ատեն՝  
մտքովս ի՞նչ երջանիկ աշխարհ կը պտըտէի. երե-  
սակայութիւնս՝ տեսած բաներս՝ ի՞նչ գեղեցիկ կը  
ցուցնէր, ամեն բան ուրախութիւն. անբիւ գուար-  
ճութիւնք, մեկզմեկու ետեւ անվախճան երջանկու-  
րիւններ, եւ սա կարգադրած երջանիկ աշխարհիս  
մէջ հանգստութեամբ կը շրջէի: Շերամի պէս յիմա-  
րութեամբ յուսած դերձաններուս մէջ գոցուելով,



իրականը տեսնելու համար հոգւոյս առջեւը քաշած վարագոյրս կը հաստցընեի, եւ անոր յայտը քիչ քիչ նուաղեցընելով, աջուրները ձեռուրներովս կուրացուցի. եւ կամաւ ստեղծած մրութեանս մեջ իյնայով, քանի կը դառնայի հոն՝ շղթաստութեանս կը պլլուեք: Երածիս կը հաւնեի. կամքս աշխարհիս փակած, երկուքը մեկ մարմին էղած, մեկգմեկե գատուիլը անհնար էր: Հոս փափաքիս հասնելու յիմար յոյսով ինքզինքս խաբէյու ատենս, մէյ մըն ալ յանկարծ մահուան զանգակին ահուէլի ձնջիւնը զիս քունես արբնցուց: Աս մեկ զանգակ մըն է որ՝ ամեն օր կը հնչուի. եւ քանի որ կը հնչուի, այն անյագ մահուան տապարին հազարաւոր մարդիկ զոհ կերբան. վախով արբննայուս մէյ մը ինքզինքիս նայեցայ, եւ ինքզինքս կես մեռած գտայ. սկըսայ ինքզինքես վախնալ . . . ո՞ր մնացին այն յուսացած երեսակայութիւններս. այն պատրաստած երանութիւններս ո՞ր մնացին . . . : Հագոյս ան տեր էղած քագանորութենէն, այսօր ի՞նչ մնաց ձեռքը: Հողէ շինուած ջնջին շէնք մը, ան ալ ջորս կողմը արուած կործանուելու մօտ: Այն մամուկին ուտայնը հաստատող կապը, մարդս աշխարհիս եւ անոր երանութեանը կապած կապին քով հաստը մալուխ մըն է. ինչու որ մարդուս կենաց քիլը մեկ հովով մը կը փրքի: Ա՛ն, երկիր երանութեան ան-


մասերը քու մեջդ երջանկութիւն կը գտնեն քու  
 գուարձութեանցդ՝ ոչ ժամանակին եւ ոչ ալ չա-  
 փին սահման մը կրնայ տրուիլ. փառք ու երջան-  
 կութիւն քու մեջդ ՚ի գատ ուրիշ տեղ չի գտնուիր:  
 Եթէ քու փառացդ ալ վախճանը ըլլայ՝ փառք չի  
 սեպուիր. վախճանին վախը եթէ քու մեջդ ալ մտնէ,  
 երջանկութիւնը քեզմէ ալ կը հեռանայ: Ձէ. չէ. եր-  
 ջանկութիւնը հոն ապահով է, ինչո՞ւ որ մեր գլխուն  
 վրայ դարձող բաղդին անխիւս իշխանութիւնը հոն չի  
 հասնիր. դառնայով դառնայով վարի աշխարհքնե-  
 րը մեկ տեղ դարցընէյուն նման, հոն ալ տարաբաղ-  
 դութեան չի կրնար հանդպցընէլ: Այս անխիւս մէյ  
 մը վայր մէյմը վեր դառնայը միայն այս երկրիս  
 սեպհականութեամբ է. այս անցաւոր աշխարհիս մեջ,  
 ամեն մեկ ժամ մէյ մեկ փոփոխութիւն յառաջ կը  
 բերեն. անհամար զանազան բաներուն մեջ ա-  
 դէկին հանդրափիլը շատ հագիւ կը պատահի. պա-  
 տահի ալ նէ, տակաւին ամենէն շուտ կորընջողը  
 անոնք են: Ինչո՞ւ որ ժամանակին ձեռքը մեկ մեծ  
 մանգաղ մը կայ. Տերութիւնները անգամ դաշտին  
 Խոտին նման արմատներէն կտրտելու վրայ է. ա-  
 մեն ժամուն ձեռքն ալ մէյ մեկ կտրէ՛ կայ, որով  
 գուարձութիւննիս կը կտրտեն, եւ շուրջերնիս եր-  
 ջանկութիւն խոստացող ծիւերնիս անգրաբար կը կը-  
 տըրտեն կոջնջացընեն: Ես տեսայ իմ երջանկու-



բիւնս . . . ինչ շուտ փոխուեցաւ ոչնչացաւ . . . ճէ,  
ճէ. բաղդէն էկած էրջանկութիւնը բաղդին պէս  
փոփոխական կըլլայ: Մարդէ էկած էրջանկու-  
թիւնն ալ մարդուս պէս անցաւոր կ'ըլլայ (Ա):

Աշխարհիս վրայ էրջանկութիւն մի՛ . . . տես  
սալիմարութիւնը: Ո՞ր է էրջանկութիւն: Ես ձեռքս  
անցուցի կարծեցի. մէյ մըն ալ հայեցայ՝ ստուեր  
է եղեր. ջէ, ջէ. այս աշխարհիս վրայ առաքինու-  
թեանն 'ի գատ' ուրիշ տեղ էրջանկութիւն չի կայ.  
Ինչպէս որ Արեւը լոյս ինքզինքին կուտայ, նոյն-  
պէս ալ առաքինութիւնը ինքզինքին էրջանկու-  
թիւն կուտայ: Անցաւոր աշխարհիս ինչքը կոր-  
սուելուն պէս, առաքինութեան էրջանկութիւնը  
չի կորսուիր: Ա. հ. երանի քէ՛ փափաքներուս  
սիրտս չի տուած՝ փափաքներս լաւ մը քննէի,  
հիմայ այսչափ ցաւ չէի գգար:

Ով ման, ամեն մարմնոյ տերը դու ես, ոտ-  
քիդ տակ Տէրութիւնները կործանելով, աստղերը  
մարելը քեզ յանձնուած է: Արփույն անգամ քիջ  
պիտի համբերես. պիտի գայ օր մը որ գայն ալ  
իւր գանէն իջեցնելով, խաւարին մէջ պիտի ձգես. . . :  
Այսպիսի պատուական զոհելով դեռ չէ՞ս մի յագե-  
նար. եւ ինձ նման եղկելի անհատի մը ինչո՞ք բշու-  
մանալով հանգիստ չես 'ի տար, եւ կուգես ինձմէ  
վրեժ առնել: Սիրտս խոցելու համար մէկ նետդ բաւ



չէ՞ր մի, որ երեքը՝ մեկ գմեկու ետեւէ սահեցուցիր :  
Լուսինը իւր երրորդ շրջանը դեռ չի լըմնցուցած,  
դու ի՛մ սիրտս երեք տեղէ խոցեցիր<sup>1</sup> : Ժամանակ-  
ները կանցնին : Այն ժամերը կը դառնան . բայց  
ի՞նչ օգուտ կը նստիմ, կեյլեմ, տեղ կը փոխեմ,  
բայց ՚ի գուր . ուրախութիւնը ինձմէ երես է դար-  
ձուցեր . ոչ մեկ խորհուրդիս մեջ կը գտնուի ան .  
ամեն մեկ խորհուրդներս սիրտս ճմլելով, դառն  
նեկտառներ ինձ կը մատակարարեն : Միտքս շա-  
րունակ կը գործէ, բնաւ հանգիստ չի տար . ան-  
գութ միտք . գիշերուան մքոսքեանը եւ լուս-  
քեանը կըսպասէ «զքեզ կը մխիթարեմ» ըսելով,  
անցածները առջեւս կը շարէ : Իսկ ես ի՞նչ յի-  
մար եմ որ իրեն ետեւէն ինկած այն անցած գա-  
ցած ժամանակներուն, իսաւար փողոցները կը շրջիմ .  
գիս մխիթարելու տեղ, անողորմ քշնամիի պէս  
դաշոյններով սիրտս կը ծակէ . իւր բոյր գործը,  
ամեն կողմանէ ինձ վշտացընել է . կառնէ գիս  
եւ ժամանակաւ գուարճացած տեղերս կը տանի .  
կեքքամ, եւ հոն ջոր անապատ մը կը գտնեմ .  
անցածները երեւակայութեանս առջեւ գայով՝  
վշտերս կը նորոգուին : Երիտասարդութեանս  
փախցուցած պատեհութիւններս կը ցաւիմ . եր-

---

1. Իւր կենը և անոր երկու զուկըները երեք տե-  
սուան մէջ մեռած են.



ջանկութենէս մնացած կտոր բրբուջ մնացորդները տեսնելով, նն գոչելով կարտասուեմ . հաճութեանս ենթակաները , սիրած սիրած , եւ անոնցմէ գուարճութիւն գգացած առարկաներս տեսնելով կը դողամ, եւ ըրած գուարճութիւններուս ամեն մէկը մէյ մէկ նետ ըլլալով սիրտս կը ծակեն:

Բայց մի միայն ինքզինքս ցաւելուս պատճառը ի՞նչ է . մի բէ աշխարհիս հուրը միայն ի՞նչ համար վառ կը պահուի . չի կան միբէ ինձմէ ՚ի գատ վշտահար: Ա՛հ, լալս ու ողբալս իմ վիճակիս ենթակայ եղող հազարաւորներուն բաժին է . ոմանք մէկ կողմանէ , ոմանք ուրիշ կողմանէ, ամենուն մայրական ժառանգութիւնն է . վիշտը մէկ իրական ժառանգութիւն մըն է որ մայրերն իրենց ծնած գաւկին հետ միատեղ աշխարհ կը բերեն : Ա՛հ, անբիւ են մարդուս սեպհականեայ վշտերը . պատերազմ, սով, մահ, այեկոծութիւն , կրակ, կռիւ , հարստահարիչ իշխողներ . հասարակութիւնը մէկը կը կողոպտէ ուրիշին կուտայ . գետնի տակ անբիւ հոգիներ հանքերու մէջ կը գործեն . լոյս տեսած ջունին : Արեւին գոյութիւնն անգամ մոռցած են , ծովու վրայ քանի քանի անմահ հոգիներ . անգութ տէրութեան հրամանաւ շղթայակապ կեանքերնին բանտերու մէջ անցունողներ : որոնք ամեն շունչ առնելուն կը բունաւորուին .



Եւ յոյսերնին միայն անյուսութիւնն է: Ոմանք անողորմ տիրոջ ձեռք անցած, պատերազմի մեջ վիրաւորուած, այսօր ան պատերազմէն մնացած ձեռուրնին երկնցուցած, բշխամուտն ձեռքէն ազատած քաղաքներնին շրջելով մեկ կտոր մը սեհաց կը մուրան: Մեկ կողմանէ ջքաւորութիւն, մեկ կողմանէ անբռնելի հիւանդութիւնք, խել մը անպաշտպան եղկելիներ ճմլելով, անոնց գերեզման մտնելէն 'ի գատ, ուրիշ ազատութիւն չեն բողոք. տես հիւանդանոցները, անբիւ մեռեալներ դռնէն դուրս կը հանեն, եւ դուռը մեռնողներուն տեղը լեցընող մեռնելու եկողներուն բազմութիւնը նկատէ: Իւր կեանքը գուարճութեան մեջ անցուցած, եւ այսօր օտարին կարօտ եղողներուն բազմութիւնը տես. խեղճ ողորմելիներ, զիրենք տեսնող եւ խղճացող մըն ալ չի կայ:

Ո՞ր գուարճութեան սիրահար հարուստ գոնէ գուարճութիւններէդ զգուելով սիրտդ նեղանայու ժամանակ, Էկ եւ ինքզինքդ սա տառապանաց տեսարաններովը զբաղեցուր, ըրած գուարճութիւններուդ համը առնելու համար, սա եղկելիներուն բշխութեանը հանդիսատես ըլլալով ողորմութեան շարժէ. բաց՝ անգամ մը ձեռուրներդ . . . : Բայց չէ, բու բովդ ամօք չի կայ. եւ երէ կայ ալ նե՛ր բարեգործութիւն ընելի կամըջ-

նաս : Գոնե վշտաց նշառակ եղողները ջարագործը  
ըլլան, մարդս վշտե ազատ ոչ բարեգործութիւ-  
նը է. ոչ ալ ջարագործութիւնը կընէ : Հիւանդու-  
թիւնը կուգայ. ժուժկայն ալ կը գարնէ. ոկրամայն  
ալ, է. առանց յանցանքի պատիժ կը քաշենք :  
Լեռներն ալ փախչիս 'ի գուր է . բշուառութիւնդ  
էտեւեդ կը հասնի, է. շատ անգամ ըրած զգու-  
շութիւննիս մեզ աւելի վշտաց կը մատնէ, մահէն  
փախած ատեննիս կերբանք գիրկը կը նետուինք,  
բաղդին շնորձացը յուսացուցածին ջափ ջէ. փըն-  
արուած երջանկութիւննիս է. գտածներնուս տար-  
բերութիւնը տեսնելով կը զարմանանք . փափար-  
նիս կը լեցուի. սրտերնիս կը հանգստանայ. ամե-  
նէն երջանկկներն անգամ ազատ ջէն բշուա-  
ռութենէ. ամենէն հանգիստ վիճակնիս անգամ'  
մեզի նեղութիւն է. ամենէն մտերիմ բարեկամնիս ան-  
գամ ախամայ զմեզ կը վշտացընէ. իրա. յանցանք  
ջի կայ. բայց ի՞նչ օգուտ, հանգստութիւննիս կը  
խանգարուի. քանի քանի անպատճառ ջարիքներ.  
քանի քանի առանց բշնամայ բշնամութիւններ (Բ):  
Ա՛հ, վշտերուս որ մեկը զրուցեմ, ամեն մեկ  
շնջառութեանս անոնց ամեն մեկը յիշելու ըլլամ,  
տակաւին ունեցած շունջս ջի բաւեր :

Աշխարհիս վրայ մարդուս բնակած տեղը նեղ  
տեղ մըն է. իսկ մնացեալները, վայրենի լեքինք ,



չոր հովիտք, սառուցեալ ծովեր, տխուր և տաք  
աւագոտ անապատներ, օճերու վիշապներու որ-  
ջեր, բոյնի արտեր, և մահուան բնակարան են-  
մեր ալ կեանքը բնակած աշխարհքնուս տեսա-  
րանին կը նմանի. աշխարհիս քագաւորը ըլլալ-  
նուս վրայ կը հայարտանանք. նայե մէյ մը սա  
քագաւորութեանը. գուարձութիւնը չափով բըշ-  
ուսուութիւնք անչափ. սրտի նեղութիւն մեկ կող-  
մանէ. ցաւեր, հոգեր, սիրտ մաշութներ մեկ կող-  
մանէ. սրտերնիս երբեք չի հանգստանար, դիպ-  
ուածը կը զարնէ կը կործանէ. մահուան վիրջ  
պը զմեզ կլլէլու համար բերանը բաց միշտ պատ-  
րաստ է : Ով լուսին լուս ն. մեր երկիրը քեզմէ  
շատ փոփոխական է : Գոյնդ նետած տրտում  
տխուր է՞ր կը շրջիս, այդէօք մարդկանց վշտա-  
կի՞ց մի կըլլաս . . . :

Միքէ ևս միայն ինքզինքս ողբամ . անպաշտ-  
պան մանուկը և վշտագոհ ծերունին « ուրիշները  
զմեզ կը մեղքնան » ըսելով կը մխիթարուին, բնու-  
թիւնը ասով մեզի սրտի կակղութիւն կուսուցանէ-  
ջէ նէ միայն ինքզինքը մեղքցող սիրտը, ինչ որ  
ալ քաշէ տեղն է. բուռիս սիրտ մը ամենուն վիշտը  
իւր արտասուացը բաժանորդ ընէ նէ՛ առաքի-  
նութիւն ըրած կըլլայ, ուրիշները ցաւած ատեն-  
նիս մենք մեզի մխիթարութիւն կը գտնենք . ու-

բիշներու վշտակից ըլլանք նե, մեր բուն վշտերը կը քեքեանայ, եկեք ուրեմն եկեք, ինձ նման վշտահարներ, սա աջուրներես հոսած արտասուքես դուք ալ բաժիննիդ առեք. վասն զի ժամանակին միայն մեկ ժամը տեսնող անձին համար այս աշխարհիս փառքն ի՞նչ խեղճ բան մըն է : Բաղդըն զքեզ կը ծաղրէ, Լօրենցիոս՝ անոր էրեսպաշտութեանը կը խաբուիս. անոր պարգէները առած աստենդ սիրտդ բնդողոյն. գիտցիր որ ան իւր շնորհքները առանց շահու չի տար. անոնց ամեն մեկը գին ունին. վախճալու համար փորորիկի մի՛ սպասեր. հանդարտ ժամանակը անելի ահուելի է : Բաղդին տուածը պարգէն չէ փորձէ. հիմայ ձեռքիդ մեջ եղածը գործածէ, բայց գալիքեն վախցիր, իմ փափաքս քու էրջանկութիւնդ արել չէ, այլ հաստատել է. ես քու ուրախութեանդ չեմ խաբուիր, գիտեմ հպարտութիւնդ կուգէ որ ես քեզի բարի վայելում կարդամ, բայց հեռի ըլլայ. ես մեկ բարեկամ մարդ մըն եմ. շոքորքութիւն ընելով զքեզ չեմ կրնար խաբել, գիտցիր որ այժմեան ձեռքդ գտնուած զուարճութիւնդ, քաշելիք բշուառութեանցդ արմատն է. օրօրոցդ երերալու աստեն, անուշ քունիդ մեջ



անուշ երագներ կը տեսնես. բայց իմացիր որ օր-  
օրոցդ վիրապի մը եզրն է: Չես գիտեր բնաւ որ  
էրջանիկ անձ մը սրարտական է բաղդին: Պարտքին  
վճարումը ուշանայ նե անողորմ պարտատերի նը-  
ման, շահը վրան դնելով, առնելիքը այնպէս կը  
պահանջէ. անցեալ էրջանկութիւնների իւր ձեռ-  
քը խարագան մը ընելով զքեզ կը հալածէ, եւ ցա-  
ւը աւելի կզգացընէ: Ե՛կ ուրեմն էկ՝ եւ շաշխարհիս  
գուարձութեանցը ինքզինքդ մի՛ տար. գուարձու-  
թիւնդ կշիռով երէ գործածես, աւելի հաճելի կըլ-  
լայ: Երէ ինքզինքնիս շատ տանք նե, էրջանկու-  
թիւնը ձեռուընուս մէջ կը մարի, եւ ուրախութիւն-  
նիս քանի որ եւելցընենք, այնչափ աւելի ցաւեր-  
նիս կաւելնայ: Անհիմն գուարձութիւննիս սուս  
բարեկամաց նման են. ունեցած բարեկամութիւն-  
նին թշնամութեան կը փոխուի. շփած կոնակնին  
մագլցելով մագլցելով՝ հանգստութիւննիս կը բու-  
նաւորեն: Լօրենցիոս խաժամութիւն բարեբաղդու-  
թիւն ըսածեն վախցիր դու (9): Իմ էրջանկու-  
թիւնս քու հետդ մեռաւ սիրելիդ իմ Ֆիլանտրոս՝  
քու վերջին շունչդ իմ հանգստութիւնս աւրեց:  
Աշխարհիս մոզպետը վարագոյրը պատուեց եւ  
մրնցուց գեղեցկութիւնդ. քու տեղդ՝ իմ տեսած



Երեւակայութիւններս, սյատրաստած բարեխառ-  
քիւններս ո՞ր մնաց: Աշխարհս անապատ է դար-  
ձեր, ջոր հող մըն է մնացեր, աջուրներուս արտա-  
սուրջ, գետի պէս կը հոսեն, սա ծերութեանս հա-  
սակին մէջ՝ ամենուն աջքեն ինկած էմ, երեսս նա-  
յող մը անգամ ջի կայ: Ահ, աշխարհիս բովիջը  
( սինիրպազը ) մեռաւ, երեւակայացեալ կերպա-  
րանքն այ ոչնչացաւ...: Ա՛հ, աշխարհս՝ ի՞նչպէս  
յանկարծ փոխուեցաւ. ի՞նչ էր երեկ, ի՞նչ էղաւ այ-  
սօր: Ա՛հ, սիրելիդ իմ Յիլանտրոս. դու հիմայ բո-  
յորովին անպիտան ափ մը մոխի՞ր էղար, ջէ նէ  
գերեզմանին խորը լեցընելու համար հող: Այնչափ  
կաշխատէիր փափաքանացդ հասնելու, եւ ձեռք  
ձգելու մօտ էիր անոնք. ահ, առաքինութեան ի՞նչ-  
պէս սիրահարն էիր. եւ երիտասարդութեանդ մէջ  
զայն ո՞րքան ձեռք անցուցած էիր: Մենք քու համ-  
բաւիդ հիացած ժամանակնիս, ասնող որ անգութ  
մահը, քու ծոցդ պահուրտած վրադ կը խնդայ է-  
ղեր. ոտքերուդ տակ գաղտնի փոսեր բանալով,  
կենացդ բակարբ կը լարէ. էղեր: Մարդս մեկ բա-  
նի մը վախճանը որքան հաշուէ, տակաւին ըրած  
ամեն խորհրդածութիւնը կարծիք մըն է, ըրածը ա-  
ղէկ է մի քի գեշ, վերջը կը լայտըլի:

Շատ անգամ խիստ ուրախանալու բանը տըրտ-  
մութեան կը փոխուի: Մտերնիս ո՞րքան կարճ է,

աջուրնուս առջեւը եղածեն անդին չի տեսներ .  
գալիքը հաստը վարագոյրի մը ետեւն է, տեսնե-  
լու կաշխատինք, բայց 'ի գուր: Ժամանակը մեզի  
կտոր կտոր տրուած է. ճակատագիրնիս գաղտնի  
պահել չի զրուցելու համար' ամեն ժամանակ դիպ-  
ուածին երդում ըրած է. մինչեւ որ կեանքերնիս  
չի վերջանայ' գաղտնիք չի տար: Արդ' այս գաղտ-  
նիքը քանի որ կը պահուի, ամեն օր ամեն վայր-  
կեան կրնայ յաւիտենականութեան սկիզբը ըլլայ:  
Բնութեան իշխանութեանը նայելով' ամեն վիճակ-  
նուս մեջ գլխընուս գալիքը կրնայ գալ. մեկ ժա-  
մերնուս իշխանութիւնը' միւսին ջանցնիր: Մար-  
դուս սրտին գալիքին վստահանայուն նման հպար-  
տութիւն չի կրնար ըլլայ: Ո՞ր է ան գալիք օրը,  
ո՞ր է: Աննդ . քանի՞ քանիներ կերթան, էւ ան  
գալիք օրը միւս աշխարհին մեջ կը գտնեն: Այս  
երկրիս մեջ մեկուսն ձեռք բան մըն ալ չի կայ. ան-  
քիւ յոյսերնիս' հաստատուն վիճի մը վրայ հաս-  
տատելու պէս, ընդհանութիւն միշտ գործածած *կ-*  
*րէլէ* էին վրայ կը հաստատենք: Կեանքին թելը ձեռ-  
ուրնիս եղած, էւ գայն ուզածնուս ջափ կերկըն-  
ցընենքի պէս անվախճան տնօրէնութիւններ կը  
կարգադրենք. «վաղը սա պիտի ընենք» ըսելով հը-  
պարտացած 'ատեննիս' այսօր կիյնանք կը մեռ-  
նինք ... (Ն):



Ահ. արդեօք Ֆիլանտրոս իւր դամբանին շինուիլը պատուիրելո՞ւ համար այն տարիքին հասաւ:

Մեր ամենէն մեծ յանցանքը՝ ապրելնիս չի գիտնայնիս է. անցեալ կեանքը չի հաշուելով, «Յտք պիտի ապրինք» ըսելով կը կենանք. ամենքն ալ «Օր մը խելքս գլուխս կուգայ» կըսեն. այս օրուան անը՝ վերջը ըլլալիք անձին կը հաւնի. Է մարդ իւր անձնասիրութեամբը, օր մը խելացի ըլլալու համար՝ հիմակուրնէ շատ մը հպարտութիւն կը հաւարք: Ան խելացութեամբ ապրելը ի՞նչ գեղեցիկ է, էքէ ապրելու ըլլայ նէ. բայց ապրելիք չունի. ապրած կեանքերնիս քանի որ ձեռուրնիս է, անկարգութեան կը գործածենք. իսկ Կարողին ձեռքը եղած ժամանակը՝ ըստ օրինի գործածելու կը պահենք (Ե):

Երիտասարդութիւններնու ժամանակ՝ քանի որ գօթութիւն ունինք, գտնուած ժամանակնուս վստահանալով՝ գալիքը բնաւ չենք խորհիր. Է տակաւին մեր հայրերէն խելացի կը սեպենք ինքզինքնիս: Մարդս էրբէ Եռեսուն տարեկան կըլլայ՝ մարդուս յանցանք գործել կարենալուն վրայ կսկըսի տարակուսիլ. քառասունին կը համոզվի ընթացքը կը փոխէ. յիսունին՝ դանդաղելուն կը զղջայ. Է խելքը գլուխը բերելու որոշումը կընէ. դարձեալ դարձեալ կը կրկնէ Է կը վճռէ: Իսկ է՞րբ կատա-



րումը. «Վաղը... վաղը է. վաղը» ըսելով՝ գերեզ-  
ման կերբայ:

Ասանկով ժամանակնիս տարուէ տարի դան-  
դադուքեամբ գողցրնելով գողցրնելով՝ կը լըմննայ.  
է. յախտենական գործերնուս վրայ խորհելու հա-  
մար՝ հագի. քէ մէկ յոկ վայրկեան մը կրնանք  
գտնել:

Մարդս բնաւ չի մեռնելու պէս կապրի. բըռ-  
նած ճամբուն նայիս նէ՝ մեռնելուն խելուքնին  
չի հասնիր կը կարծես. բայց Մահը մէյմ'ալ էրբ  
մօտենայ էրենց, կսկըսին վախնայ, է. սրտերնին  
դողի մէջ կիյնայ: Այս ընթացքով ճանցցած բարե-  
կամներնիս, օրէ օր աջուրնուս առջեւէն կը վեր-  
նայ. անոնց մահը գմէգ ալ կը խոցէ, բայց վեր-  
քերնիս շուտ կը գոցուի. կայծակին կրակը մարե-  
լուն պէս՝ կայծակին իյնալը կը մոռնանք: Օղին  
մէջ թռչող թռչնիկին, է. ծովու վրայ սահող  
նաւուն հետքը աւելի երկայն կը տեսէ, քան քէ  
մարդուս մտքին մէջ մահուան խորհրդածութիւնը.  
մենք այն խորհուրդը՝ մեռած բարեկամնուս հետ  
կը բաղենք. գերեզմանին հողը՝ թրջած արտասուք-  
ներնուս հետ կոջնջանայ, կերբայ...: Ի՞նչպէս...  
մի քէ կրնամ մի մոռնայ Ֆիլանտրոսս... սիրտս  
լեցուն է... նորէն էլաւ սիրտս: Ա՛հ. ճրջափ որ  
ողբամ՝ քիչ է. ամենէն երկար՝ զիջերները մինչէս

յոյս արտասուեմ, կրակս չի մարած՝ բռնուցի կը  
զարբնուն եւ ողբս կարեն:

Ահն, բռնուցի ճայնը կը լսուի. ի՛նչ կանուխ  
կարբննան...: Ո՛ր երգիչ Սոխակ. ես ալ քեզի պէս  
գիշերը կը փնտրուեմ. իմ սիրտս ալ բուկիցի պէս  
խոցուած է: Վառահար մշտահար խօսեով՝ ցաւե-  
րբս անհետազրնելու կաշխատիմ. երկուքներնուս ալ  
հառաջանքը՝ միատեղ կը հնչուին. բայց աստղե-  
րեն ՚ի գառ ունկնդիր ջուհին: Աստեղը քեզ կար-  
ծես մտիկ ընելու շարուած էն. իմ ողբս աշխար-  
հիս մրայ լսող չի կայ: Ինչ բանաստեղծներ/էկեր  
էն աշխարհ, որ իտե՛նց ճայներովը ժամանակներ-  
նուն գուտոթութիւն պարգեւեր էն:

Սա սեռերուան յուրեան էս աշխարհիս մթու-  
թեանը մեջ՝ ես ալ անոնց սիրմո մխիթարուելու  
կաշխատիմ. անոնց երգերովը ինքզինքս սքաղեզր-  
նելով մօտերս քեթեւարնելու կաշխատիմ. սերերնուն  
բաժանորդ կոլամ, բայց երեւակայութիւններնուն  
ճեմ կրնար երօայ: Ո՛վ Հովերոս<sup>1</sup>, ո՛վ Միլթոն<sup>2</sup>. եր-  
կուքիդ ալ տեսութենէ զուրկ<sup>3</sup> խաւարի մեջ կը  
խօսեիր. իսկ ես օրուան յոյսէն առէլի, գիշերուան

1. Յոյն բանաստեղծ:

2. Անգղիացի բանաստեղծ:

3. Երկուքն ալ կտր էին:



մթութիւնը կամաւ կը փնտրուեմ: Ա՛հ, իմ սրտիս  
այ սերը՝ զձեզ կիզող հրոյ ջափ ըլլալու ջէ՞ր մի-  
Յոյն բանաստեղծին<sup>1</sup> կենդանութիւն տուող հայրե-  
նակիցիս<sup>2</sup> ճայնը՝ իմ րովս այ գտնուելու ջէ՞ր մի-  
Փօփ<sup>3</sup> բանաստեղծը՝ մարդուս վրայ բանաստեղծա-  
բար կարդաց. բայց ես անմահ մարդուս վրայ կու-  
յամ:

Շատ անգամ այս կէտերէս անդին կանցնիմ,  
ինչո՞ւ որ ասկեց վերջը ես յաւիտենականութենէն  
ի գատ, ի՞նչ բանի կրնամ բաղձայ: Հոս ես խիստ  
թշուառ եմ: Յիրաւի՛ էրէ Փօփ այս անցաւոր ժա-  
մանակիս մեջ մնալուն՝ կրած սիրոյն քեւերովը  
թռած ըլլար նե՛ միևնչեւ յաւիտենականութեան դու-  
ռը կը հասներ. եւ իմ հասած բարձրութիւններուս  
մեջ, Փօփ սիրոյն քեւերովը՝ օղերուն մեջ կրնար  
կենայ, եւ մարդուս անմահութիւնը երգելով, քե-  
զիս եւ քե ամեն մարդ կը մխիթարէր:

- 
1. Համերոս:
  2. Մելիթըն:
  3. Անգղիացի բանաստեղծ:



# ՅԱԻՆԼՈՒՍՅՈՒՆ



Ա. Այս Աւետարհին մէջ երկնային-Տէրուն անկեանքս լանձը՝ Արարչոյ խնայ և զգրութեանը դեմ զինել է:

Բ. Աւետարհին մէջ հարգոս արտան ալ սրտաբնէ ըլլայ, Բնական լի պատիւի:

Գ. Սրբանկոթեանը անհոհ լի՛ք իրայ լի հասարակացը, իրծանելու համար զայն իւրարարոսի:

Դ. Մարդաստան ամենին դարան Բնասարանեանը, երկայն և անպարտար ճանհամբ մերանելն է: Մահը արանուանի դեմանելու քանի որ ճանանայ անինք, գալիք ճանանային անպարտար գրանեւը՝ լար դեմդայն է: Դոս այսօրուանի ինքիդ գլուխդ բեր. երբէն յընկել յիմարանեան է. ինի դոս այսօր՝ ինքիդ գլուխդ բերելը լաւսան ին յիման, լիւրեպիս՝ ինքիդ գլուխդ բերելու ճանանայ լես սանեար:

Ե. Յիմարը՝ արիւնի ճ յիմար ինք, Բայց իմար յիմարանեան լի յիմար: Մարդաստան ալ էն ինկային՝ ընդհանրապիս այն յիմարին լար լի ճանար:



Արշակ  
Գառնի  
Արշակունի  
— Կաթարիս



Արշակ  
Գառնի  
Արշակունի  
— Կաթարիս

۴۰۲  
۲۰۲



۳-۴



٤٦٥  
465

Handwritten Arabic script, possibly a title or signature, including the word "كتاب" (Kitab).



Handwritten Arabic script, possibly a signature or date, including the word "سنة" (Sana).

Handwritten Arabic script, possibly a signature or date, including the word "سنة" (Sana).

Handwritten Arabic script, possibly a signature or date, including the word "سنة" (Sana).

ՀԱՅԿ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0548805

ЦЕНА

624  
-----  
465